



Մ. Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎ

Պրոֆ. Պ. Վ. ՎՆԱՂԻՄԻՐՈՎԻ



Միևայիլ Վաթիկիւ Լոմոնոսովն առաջին ռուս նշանաւոր բանաստեղծն ու գիտնականն էր։ Նա առաջին ռուս մարդն էր, որ իրաւամբ կարող էր դասուել եւրոպական գիտնականների շարքը իր բաղմատեսակ, բաղմաթիւ ու բնատուր աշխատանքներով, որոնք նուիրուած էին բնաբանութեան, քիմիային, մետաղագործութեան, մեքենագիտութեան և այլն։ ԺԸ դարի առաջնականագ գիտնականներն, ինչպէս՝ Էյլեր, Ուլֆ և այլք Լոմոնոսովի տաղանդին ու աշխատանքներին արժանաւոր գնահատութիւն էին տալիս։ Ժամանակակից ռուս գիտնականները Լոմոնոսովի գործերի մէջ տեսնում են բնաբանութեան մասին արտայայտած լուսաւոր մտքեր, որոնք կանխում են իրանց դարը։ Բայց Լոմոնոսովը ժամանակի պայմանների ստիպմամբ չէր կարող իրան ամբողջովին նուիրել գիտութեան, և գլխաւորապէս հանդիսանում է իրր բնաբանութեան նշանաւոր ընդհանրացնող։

Լոմոնոսովի գլխաւոր ծառայութիւնը ռուս գրական լեզուն մշակելն է։ Այս կողմից նա «ռուս նոր գրականութեան հայրն էր։ Բացի արձակ ոճը՝ գիտական հեղինակութիւնների համար, նա ստեղծեց նաև բանաստեղծական լեզուն, գլխաւորապէս իր ձօներով։ Նա տուեց նաև լեզուի և բանահիւսութեան տեսութիւն՝ առաջին ռուս քերականութեան ու ճարտասանութեան մէջ, որ ինքն էր գրել։ Համարեա մի ամբողջ դար այդ տեսութիւնը տիրապետում էր ռուս գրականութեան մէջ և նրա անունով էր դարձեալ, որ ԺԹ դարի սկզբում մեծ բանակուիւ սկսուեց Շիշկովի հետեողների և կարամզինի ու նրա նորասէր դպրոցի միջև։ Աւելի նշանաւոր փոփոխութիւններ ռուս լեզուն կրեց Պուշկինից լետով, որը չէր ընդունում Լոմոնոսովի արձակ ոճի շէշկա սլաւ, կէս լատին» կաղմի «միօրինակ ու ճնշիչ ձևերը»։

Լոմոնոսովի արած փորձերը զիւցադներդութեան, ողբերգութեան ու պատմագրութեան մէջ աւելի նաւադ թշուառութիւններ ունեցան և նա զեւ ևս իր կենդանութեան ժամանակ առաջին անգին ալք կողմից ստիպուած էր ուրիշներին զիջելու: Լոմոնոսովի գրական փառքի ստեղծողը նրա ձօները եղան, որոնց մէջ նա հանդիսանում է եւրոպական կեդրոնական ուղղութեան հետեւող: Որպէս ազգային բանաստեղծ Լոմոնոսովն իր ձօներէ մէջ ցոյց տուեց հզօր և արտաբայտիչ լեզու, լաճախ ճշմարիտ բանաստեղծական ոգեւորութիւն, որ նրա մէջ ծնում էին բնութեան մեծ երևոյթները, գիտութիւնը, ժամանակակից պատմութեան փառաւոր դէպքերը, մասնաւորապէս Պետրոս Մեծի գործունէութիւնը և վերջապէս հայրենիքին փառաւոր ապագայ երազելը: Որպէս անպարտէս հայրենասէր, Լոմոնոսովը «հայրենիքի սիրոյ համար» չէր խնայում ոչ ուժ, ոչ ժամանակ: Բազմաթիւ ծրագիրների և նամակների մէջ նա որպէս հրապարակագիր և հասարակական գործիչ լատնում էր իր մտքերը ռուս լուսաւորութեան զարգացման մասին և իբրեւ ժողովրդի հարադատ որդի, նրա բարեկեցութիւնը բարձրացնելու միջոցներ էր առաջարկում: Ժամանակակիցները նրան անուանում էին «առաջին մեծութեան աստղ», «մեծ մարդ», «փառապանծ քաղաքացի»: Պուշկինը չընդունելով հանդերձ նրա արձակ ոճը, Լոմոնոսովի նշանակութեան մասին ասում է հետեւեալը. «Մեծ մարդ էր Լոմոնոսովը: Պետրոս մեծից մինչև Կատարինէ II-ը նա է միակ մարդը լուսաւորութեան նախանձախնդիր: Նա ստեղծեց ռուս առաջին համալսարանը: Կամ աւելի լաւ է ասել, նա մեր առաջին համալսարանն էր»:

Լոմոնոսովը ծնուեց Արխանգելսկի նահանգում, Խոլմոգորու մօտերքը գտնուող Դեսխովկա գիւղում 1711 թ.: Նրա հայրը մի ունեւոր գիւղացի էր, իսկ մայրը սարկաւադի աղջիկ: Լոմոնոսովի հայրը թէ հող ունէր և թէ նաւակներ, և պարագում էր ձկնորսութեամբ ու ապրանք փոխադրելով, որի համար հեռաւոր ծովային ճամբորդութիւններ էր անում: Ալք ճամբորդութիւններին մասնակցում էր նաև պատանի Միխայլովն, որ լեռով այնքան ոգեւորութեամբ էր լիջում իր գիտնական, ու քերթողական գրուածքներում հիւսիսային ուղիւնսուր, Սպիտակ ծովը, նրանց ասիերի բնոյթը, ծովի կեանքն ու հիւսիսասիայի: Նրա գրական գործունէութեան վրայ մասամբ նրա կատել է և ժողովրդական բանահիւտութեան ազդեցութիւնը, որ այնքան դիմացիւն կեանք ունի Ռուսաստանի հիւսիսում: Լոմոնոսովի թէ քերականութեան, թէ ճարտասանութեան և թէ բանաստեղծական երկերի մէջ մենք գտնում ենք ալք ազդեցութեան հետքերը: Դեռ Սումորոկովը *) լանդիմանում էր Լոմոնոսովին «խորմողորի» բարբառը գործածելու համար:

*) Նրա ժամանակակից աչքի ընկնող գրողներից մէկն է Մ. Թ.

Դեռ հայրենի գիւղումն էր նա, որ լսեց Պետրոս մեծի մասին և միաժամանակ անուեց եկեղեցական-սլաւ մատենագրութեան ողով որով ասորում էին Սպիտակ ծովի ափերն ապաստանած առաջնաձէս (сороообряды) կոչուած աղանդաւորները: Մասամբ այն, մասամբ էլ իր մօր ազդեցութեան տակ Լոմոնոսովը կարդալ-գրել սովորեց և ընթերցասիրութեան վարժուեցաւ: Բայց Լոմոնոսովի մօլըը շուտ մեռաւ, իսկ խորթ մայրը չէր սիրում նրա պարագամունքները: Ինչպէս ինքն է ասում մի նամակում, նա «ստիպուած էր կարդալ ու սովորել, ինչ որ հնարատու էր, առանձնացած ու ալմալի տեղերում, դիմանալով քաղցի ու ցրտի»:

Մի քանի գրողէն գիւղացիներ մերձակալ գիւղից, որոնցից մէկը գործակատար էր Մոսկուայում, Լոմոնոսովի համար գրքեր էին բերում: Այս գրքերից նա մասնաւորապէս սիրեց Միլետի Սմոտրիցկու քերականութիւնը, Սիբէոն Պօլոցկու վանկալայով գրած Սաղմոսը և Մազնիցկու թուարանութիւնը: Այդ նոյն գիւղացիներն էին, որ 1730 թ. օգնեցին Լոմոնոսովին գնալու Մոսկուա «գիտութիւններ» սովորելու համար և վճարում էին նրա գլխահարկը: Նկատելու արժանի է, որ 1732 թուից նա հարկերի զրքում փախած է լինում:

Երկար թափառելուց լեռու վերջապէս նա ընկաւ Մոսկուայի «սլաւ-լատինական» ճեմարանը կամ «գալոցը», որտեղ դառ էին աւանդում իեկ հոգմոր ճեմարանի սաները: Այստեղ ուսումնասիրեց յատին լեզուն, պուլէտիկան, ճարտասանութիւնը և մասամբ փիլիսոփայութիւնը: Այդ առաջին դպրոցական շրջանում վարած կեանքի մասին նա այս է գրում Լուովալովին 1753 թ. «Օրական ստանալով մի ալտին (3 կ.) եւ չէի կարող ուսելու համար աւելի ունենալ, քան մի դենեգիկ հաց և մի դենեգիկ կաթ»: Այս կերպ ևս ապրեցի 5 տարի և ձեռք չբաշեցի գիտութիւններից» (1731—1736):

Ենթադրում են, որ այդ շրջանում Լոմոնոսովը մի կարճ ժամանակ եղել է Կիևի ճեմարանում, թէև նրա դիւանում ոչ մի հետք չի մնայել Լոմոնոսովի մասին: Դեկպր գետի ափերի նկարագրութիւնը «Դոբրլիւա Պոլխոր» գրուածքում վկայում է այն կենդանի տպաւորութիւնների մասին, որ ստացել է նա «խաղաղ Դնեպրից», «որի մէջ արտացոլում են նրա դիք ամբերին խիտ-խիտ ընտած ուռիները», բանաստեղծը լիշատակում է եղնիքին, սոխակին, հովուի սրինգը, Դնեպրի ժեղուաները և այլն:

Դեռ եւ Մոսկուայի ճեմարանումն էր, որ Լոմոնոսովը սկսեց ոտանաւորներ գրել: Կասկած չկա, որ Մոսկուայի ճեմարանում ուսած պուլէտիկան ու ճարտասանութիւնը նշանակութիւն ունեցան Լոմոնոսովի զարգացման համար: Օգնելով նրան իբր քանաստեղծի և ճարտասանի, բայց նա գլխաւորապէս պարտական է արտասանմանում ստացած կրթութեանը: Դիմադրող բանից մէջ բնականաբար ազդեց

Մի բաղադրողը զիպուած որոշեց Լոմոնոսովի վիճակը 1735 թ. Պետերբուրգի գիտութեանց ակադեմիան 12 ընդունակ աշակերտ պահանջեց Մոսկուայի ձեմարանից: Դրանցից մէկը Լոմոնոսովն էր, որ երկու ուրիշ ընկերներէ հետ 1736 թ. սեպտեմբերին ճանապարհ ընկաւ Գերմանիա, Մարբուրգի համալսարանը այն ժամանակները հռչակաւոր պրոֆ. և լատինի փրիւստովալ: Ուէֆի մօտ: Ուէֆի առաջնորդութեամբ Լոմոնոսովը պարապում էր մաթեմատիկայով, բնագիտութեամբ և փրիւստովալութեամբ, իսկ տպալ ֆրայբուրգում պրոֆ. Էնկելի մօտ նաև քիմիայով և մետաղագործութեամբ—ընդամենը հինգ տարի:

Նրա առաջնորդները զովասանական կարծիքներ լատինեով նրա պարապմունքների մասին, միաժամանակ գրում էին նաև նրա վարած անկարգ կեանքի մասին: Այդ կեանքին Լոմոնոսովը վերջ դրաւ: Մարբուրգում, երբ պսակուեց Եղիսաբէթ-Քրիստինա Յիլիսի հետ, որ քաղաքային խորհրդի հանդուցեալ անդամի աղջիկն էր: Նրա վարած անկարգ կեանքը, քէֆերը, պարտքերը, մի քաղաքից մի ուրիշ քաղաք տեղափոխուելը, ոչ միայն Լոմոնոսովի լատիշտակուող բնավորութեան հետեանք էին, այլ և համապատասխան էին այն ժամանակուայ ուսանող երիտասարդութեան ընդհանուր բնավորութեանը:

Նորն գերմանական ուսանողութեան մէջ էր, որ Լոմոնոսովը տեսաւ անպիտի լատիշտակութիւն բանաստեղծութիւնով, որ արտայայտուեց 1738 և 1739 թ. արտասահմանից դիտութեանց ակադեմիան ուղարկած նրա երկու ձօների մէջ.— մէկը «Ֆենըլտնի ձօնը», միւսը «Ջօն Խոտինը առնելու առթիւ»: Այս երկրորդ ձօնին նա կցել էր նաև մի նամակ «Ռուս բանաստեղծութեան կանոնների մասին»: Չնայած այն ահագին նշանակութեան, որ այդ երկու ձօնն ունին ռուս բանաստեղծութեան զարգացման համար, իրանց ժամանակ ներառեց լոյս չտեսան, և միայն ծառայեցին գիտութեանց ակադեմիայի աչքում որպէս ապացոյց Լոմոնոսովի զրական ընդունակութիւններն ունենալուն:

Քոտսինը առնելու առիթով զրած ձօնից ու նրան կրցած նամակից սկսուում է ռուս նոր բանաստեղծութեան պատմութիւնը: Ունենալով աւելի մեծ բանաստեղծական տաղանդ քան Տրետիակովսկին, որ իրանից առաջ հանդէս էր եկել տոնիքական շարակազմութեան տեսութիւնով, Լոմոնոսովը ցոյց տուեց թէ որքան «անհիմն» է Լեհաստանից ռուսներին անցած սիլաբիքական շարակազմութիւնը և առաջարկեց իր տաղաչափութիւնը, որ հիմնուած էր ռուս լեզուի լատիւսիքներին և շեշտերի ուժի, և ոչ թէ երկար ու կարճ վանիկերի վրայ: Ուշադրութեան արժանի հանդիսանում է այն, որ Լոմոնոսովն հէնց այդ առաջին փորձով հանդիսանում է ոչ թէ լանդաշխութեան երկրպագու, այլ բանաստեղծական բա-

ների ընտրութեան ու նշանակութեան և դառ լեզուի հարը-
տութեան վրայ մատնացող անող:

Չամադան ձախորդ արկածներից լետոյ (նրան աւանում
են, գերմանական զինուոր անում, փախչում է վեղէլ բերդից)
Լոմոնոսովը 1741 թ. վերադարձաւ Պետերբուրգ: Նոյն թուակա-
նի «Привѣчаніе къ Петербургскимъ Вѣдомостямъ» թեր-
թում լայ տեսաւ նրա «Չոն ի հանդիսաւոր տօնախմբութիւն
ձնորեան կայսեր Իսաան III-ի և Առաջին տրոֆէլը» նորին
մեծութեան Իսաան III-ի շնորհիւ Շուէդացից վրայ տարած
փառաւոր լաղթութեան: Եղբերկու ձօնն էլ այժմ շատ հա-
զուազրւա բան են, որովհետեւ նրանց էլ ոչնչացրին այն ա-
մենի հետ, ինչ վերաբերում էր Իսաան Անտոնովիչ կայսեր
ժամանակին:

Չնայած իր գրած ձօներին և բաղմաթիւ դրաղմունքնե-
րին Լոմոնոսովը ոչ պաշտօն էր ստանում, ոչ ռոճիկ: Միայն
երբ 1742 թ. գահ բարձրացաւ Նշիսաբէթ կայսրուհին նրան
ակադեմիայում բնագիտութեան աշխատի պաշտօն տուին:
1743 թ. Լոմոնոսովին սկսում է չափերի վերածել Դաւթի սաղ-
մաններից մի քանիսը և գրում է իր լաւագոյն երկու ձօնը.
«Երեկոյեան խորհրդածութիւն Աստծու մեծութեան մասին» և
«Առաւօտեան խորհրդածութիւն Աստծու մեծութեան մասին»:

Այդ նոյն տարին Լոմոնոսովն իր լանդգուսթիւնների
համար, ինչպէս նաև ակադեմիկներին չնազանդուելու և
հարբած ժամանակ գերմանացի պաշտօնակիցների հետ լաճա-
խակի կուիւների համար եօթ ամիս սպասակի հսկողութեան
տակ պահուեց» և ամբողջ տարին միաց անռոճիկ: Երբ նա
խնդրեց, որ իրան ապրուստի միջոց տան, նրան թող տուին
ակադեմիայի հրատարակութիւններից 80 ր. արժողութեամբ
գիրք վերցնել: Խնդիր աւելով, որ իրան քիմիայի պրոֆեսոր
նշանակեն, նա չի լիշատակում իւր ձօները, այլ միայն խօ-
սում է շաթիներէնից, գերմաներէնից ու ֆրանսերէնից ա-
րած բնագիտական, մեքենագիտական և քերթողական գրք-
քեր թարգմանելու, լեռնագիտութեան գիրք ու ճարտասա-
նութիւն հեղինակելու մասին, լիչում է ուսանողներին դա-
ստանդելն ու քիմիական նոր փորձեր գտնելը: Լոմոնոսովի
քիմիայի պրոֆեսոր նշանակուելն ու կնոջ արտասանմանից
զալը միաժամանակ եղաւ: Այդ ժամանակից սկսած Լոմոնո-
սովի կեանքն անցնում է աւելի ապահով ու հանդիսա գիտա-
կան աշխատանքների, գրական դրաղմունքների և լաւագոյն
հասարակական լարաբերութիւնների մէջ:

1745 թ. Լոմոնոսովն աշխատում է ուսերէն հրապարա-
կական դասախօսութիւններ կարդալու իրաւունք ձեռք բերել,
իսկ հետեւեալ տարին հոգում է թուլտութիւն ստանալ հոգևոր
դպրոցներից ուսանողներ հաւաքելու—թարգմանական գրքե-
րը շատացնելու, բնական գիտութիւնները գործադրելու և ու-
րիշ նպատակների համար: Ուժի բնագիտութեան թարգմանու-

Թեան լառաջարանում Լոմոնոսովը որոշ և հասկանալի ձևով պատմեց այն բաների մասին, որ ունեցան բնական գիտությունները ժե և ժԸ դարում։ Դա մի կատարեալ նորություն էր առաջ լեզուի համար, որ գիտական տերմիններ չուներ և որոնց պիտի ստեղծէր Լոմոնոսովը։ Գիտության ժողովրդականացնելը արտապայտուեց նաև Լոմոնոսովի ակադեմիական ճառերում քիմիայի օգտակարութեան մասին և այլն։ Սկսած 1747 թուից Լոմոնոսովը բացի հանդիսաւոր ձօները, պարտաւոր էր ոտանաւոր վերաառութիւններ կազմել հրաւորութիւնների ու հրախաղութիւնների, նաեւրն առաջին անգամ ջուրը թողնելու և դիմականաւորներին առիթով, և մինչև անգամ պատուէրով ողբերգութիւններ գրել, այսպէս օրինակ «Թուին Սեկլմը», 1750 թ. և «Ինտոֆոնաթը» 1752։ Նոյն թուին Նշիսաթէթ կալտուհու ակադեմիային տուած նոր կանոնադրութեան ու նոր պաշտօններ հաստատելու առիթով, Լոմոնոսովը գրեց իր նշանաւոր ձօներից մէկը, որ սկսւում է այս լատին շարքերով. «0 դու, երկնաւոր թագաւորների և թագաւորութիւնների խնդութիւն (սիրելի խաղաղութիւն, դու, բաղդաւորութիւն գիւղերի և պահապան քաղաքների, որքան օգտակար ու գեղեցիկ ես»։ Այս ձօնի մէջ էր, որ բանաստեղծը գովքեր երգեց իր իղէալին, իր կուռքին—Պետրոս Մեծին *поставъ въ Россію чедовѣка* և միանգամայն նաև գիտութիւններին—«Աստուածալին, մաքրագոյն մաքի ալդ պտուղներին»։ Ալդ ձօնի վերջին տուներից մէկում Լոմոնոսովը բացականչում է «0 դուք, որոնց սպասում է հարեւնիքն իր խորքերից»—գիմելով ապագայի արդիւնաւոր դաւակներին։ Այս ձօնի մէջ հին դասական ձևերից մի քանի բան կալ վերցրած. ալդ նոյն տարին նա չափական թարգմանութիւններ էր անում դասական հեղինակներից։

Միաժամանակ Լոմոնոսովը պարապում էր բնագիտութեամբ ու քիմիայով՝ շարունակելով իր գիտական զբաղմունքները, և լատիներէն դիսերտացիաներ էր տպագրում, որոնք ջերմ քաջալերութեան էին արժանանում արտասանմանի ալն տեսակ գիտնականների կողմից, ինչպէս օրինակ Բերլինի ակադեմիկոս Էլլէրը։ Նոյն ալդ Էլլերի ուշադրութեան շնորհիւ Լոմոնոսովը վերջապէս կարողացաւ գլուխ բերել քիմիական վերլուծարանի հիմնարկութիւնը։

1748 թ. գիտութեանց ակադեմիային կից հիմնուեցին պատմական դպարտամենտ և պատմական ժողով. այստեղ Լոմոնոսովը կռիւ մղեց զերմանացի արդիւնաշատ գիտնական Միլլէրի դէմ, մեղադրելով նրան թէ գիտամբ ստորացնում է սլաւոններին, Նեստոր տարեգրողին և ուրիշ առաջ հեղինակաւոր անձանց, գերադասելով միաժամանակ օտարներին։ Նոյն թուականին նա հրատարակեց և առաջ լեզուով լուս տեսնող առաջին ճարտասանութիւնը, որը կազմելու համար օգտուել էր ոչ միայն լատիներէն հին ճարտասանութիւններից, այլև

և իր ժամանակակից Գոռչէտի և Ուֆի գործերից: Եւստակիոս
 Լոմոնոսովի գիտական ու գրական վաստակների մէջ
 խիստ սերտ կապ կար. նրա լաւագոյն ձօնը «Երեկոյեան
 խորհրդածութիւնն», որ լինէր է բանաստեղծական ոգևորու-
 թեամբ և անկեղծ զգացմունքով, հեղինակի ասելով բովան-
 դակում է իր սլաղուղուայ կարծիքը, որ հիւսիսափայլը կա-
 րող է եթերի շարժումից առաջ գալ:

Թէ ուսն լեզուին և թէ տաղաչափութեան արուեստին
 Լոմոնոսովը տիրապետում էր անելի լաւ քան Նորա երկու միւս
 ժամանակակից գրականները՝ Տրետիակովսկին և Սուսլովը:
 Սրանք շարունակ բանակուի մէջ էին Լոմոնոսովի հետ, վէճ
 բանալով լեզուի, ոճի և գրականութեան մասին: Երբեմն այդ
 վէճերը ժամանակի պայմաններին համեմատ տրոտույալուում
 էին կոպիտ ձևով. բայց Լոմոնոսովը միշտ լաղթող էր դուրս
 գալիս:

1749 թ. ակադեմիայի հանդիսաւոր ժողովում Լոմոնոսովն
 արտասանեց «Գովաբանութիւն կայսրուհի Եղիսաբէթ Պետ-
 րովնային», որի մէջ ինչպէս իր ձօներում, փառաբանում էր
 Պետրոս Մեծին և գիտութիւնները՝ նրանց գործադրութեան
 կողմից լոգուտ և ի փառս Ռուսաստանի: Կայսրուհուն տուած
 գովաբանութիւնը պալատի ուշադրութիւնը դարձրեց Լոմոնո-
 սովի վրայ. և պատճառ դարձաւ ակադեմիայում բաւականին
 թշնամիներ վաստակելու:

Մօտ 1750 թ. Լոմոնոսովը դտաւ մի «պատրոն», հովա-
 նաւոր. դա կայսրուհուն սիրելի Ի. Եւսէլալովն էր, որին բա-
 նաստեղծը մի քանի անկեղծ նամակ գրեց արձակ ու չափով,
 զնահատելի ինքնակենսագրական նշանակութիւն ունեցող:
 Նամակներից մէկում Լոմոնոսովն ասում է իր մասին. «Միտքը
 բեր, որ իմ ոգին հանդիստ չունի. լինիք իմ ջանքն ու աշխա-
 տանքը: Կեանքս անցնում է պատերի մէջ ու կրակի մօտ. և
 միակ վայելչութիւնս ամառուայ մասին գրելն է. գրում եմ
 ամառուայ մասին, բայց ամառ չեմ վայելում: և վայելչու-
 թիւնս անընդուն մէջ եմ միայն որոնում: Այդ ժամանակնե-
 րը Լոմոնոսովը լատիպէս պարապած էր մողաթիլի և կեղծ
 մարդարտի և ապակու գործարանի վրայ:

Առաջին անգամ 1751 թ. նա լոյս ընծայեց իր հեղինա-
 կութիւնները. «Հաւաքածու զանազան հեղինակութեանց ար-
 ձակ և չափածոյ»: Ակադեմիայի նախագահի հրամանով Լոմոնո-
 սովը գրեց ռճաւ քիմիայի օգտակարութեան մասին (1754 թ.),
 ձառն սկսում է մի շարք ապացոյցներով. որոնք հաստատում
 են Եւրոպացիների շուսման դերադանցութիւնը՝ թափառա-
 շրջիկ ամերիկացիների վայրենութեան հետ համեմատած: Ապա
 նա խօսում է մաթեմատիկայի կարևոր նշանակութեան մա-
 սին քիմիայի նկատմամբ և գիտութեան ապագայ սպասելիք
 արդիւնքների մասին. այդ «ճառը» ինչպէս և դրան լաջորդող
 միւս ճառերը ցոյց են տալիս Լոմոնոսովի ինքնուրոյն փորձ-

նական աշխատանքները «քնափորձութեան» լայնածաւալ պատարիդում։ արդէս են «Եկեքտրական ուժից առաջ եկող օդալին երևութների մասին» (1755)։ «լուսի ծագումը, որ նոր տեսութիւն է ներկայացնում գոյների մասին» (1756)։ «մտադների ծնունդը երկրի ճեղքուելուց» (1757)։ «սծովային ճանապարհի մեծ ճշտութեան մասին» (1759) «Արուսեակի երևութը արեւի վրայ նկատած» (1761)։ Ուշադրութեան արժանի է Լոմոնոսովի խօսելու ձեր, վերացական գիտական գաղափարներից առօրեայ կեանքին, մահաւանդ դուս կեանքին անցնելը։ Ամեն տարի Լոմոնոսովը ակադեմիայի հրատարակութիւնների մէջ լրջ էր ընծալում լատիներէն դիսերտացիաներ։

1753 թ. Լոմոնոսովը մենաշնորհ ստացաւ ապակու և կեղծ մարդարտի գործարան հիմնելու։ դրա հետ նա ստացաւ հող և 211 ճորտ։ Այդ ժամանակներն էր ահա, որ նա դրեց իր նշանադր խրատական ոտանաւորը։ «նամակ ապակու օգտակարութեան մասին», ուղղուած Դուվալովին։ Այդ նոյն Դուվալովի միջոցով Լոմոնոսովը հնարաւորութիւն ունէր կարեւոր ծրագիրներ ընդունել ապու և իրադրծելու։ ալսպէս էր օրինակ 1755 թ. ռուս անաշին համալսարանի հիմնարկութիւնը Կոսկուալում, որի համար Լոմոնոսովը կազմեց մի նախագիծ, հիմնուելով արտասահմանի համալսարանների «հիմնարկութեանց, օրինաւորմանց, ձէսերի և նովորութեանց» վրայ։ 1753 թ. նրան երկար ժամանակ զբաղեցնում էր եկեքտրականութեան հարցը, որ կապ ունէր պրօֆ. Ռիխմանի դժբախտ վաղճանի հետ, որին սպանել էր կաթակի հարուածը եկեքտրական մեքենայով փորձ արած ժամանակ։ Լոմոնոսովը գրում է Դուվալովին, որ Ռիխմանի ընտանիքին թողալ նշանակուի և կցում է թէ «այն դէպքը թող չմեկնուի ի վնաս գիտութիւնների բարգաւաճման»։

Լոմոնոսովի «Ռուս քերականութիւնը» լրջ տեսաւ 1755 թ. և տասնհորս տպագրութիւն ունեցաւ։ Չնայած որ ալսքերականութիւնը հիմնուած է Սմոտրիցկու քերականութեան վրայ, որով նա նմուել էր, բայց և այնպէս այն ժամանակուայ համար նա շատ ինքնուրու բան ունէր իր մէջ։ Լոմոնոսովն արդէն տաւր տարբերում է ձայնից և իբր բնափորձ ձայների ծագումը որոշում էր անդամահատական — բնախօսական և ձայնաբանական տեսակէտով, խօսում է ռուս լեզուի երեք բարբառների մասին, այն է՝ Մոսկուայի, հիւսիսի և Ուկրաինի, հնչաբանօրէն ներկայացնում է հնչիւնների արտաբերուելը բառերի մէջ։ Օրինակները շատ անգամ նա իր կեանքից է բերում, օրինակ՝ «բանաստեղծելն իմ զուարճութիւնն է, բնագիտութիւնն իմ վարժութիւնները»։

Մի տարի լետոյ նա պաշտպանում էր ռուս ստորին դասի իրաւունքը զիմնադներում ու համալսարանում կրթուելու, որին ընդդէմ էր Միլլէրը։ Ջարմանքի արժանի է Լոմոնոսովի չիտակութիւնն ու արիւտութիւնը, եթէ աչքի առաջ ունենանք

որ նա շատ անգամ ննդն է ընկել և նթարկուած ծանր մեղադրանքներին իր «Օրհներգ մարութին» գրութեամբ առիթ տուեց շատ կոպիտ լարձակումների Տրեյտակովսկու և ուրիշների կողմից։

Մոսկուայի նոր հիմնած համալսարանի տպարանից 1757 թ. Ի. Եռվալովի ձեռնառութեամբ լոյս տեսան Լոմոնոսովի շարադրութիւնները հեղինակի պատկերով, որի մէջ տառջին անգամ տպուեց նրա դատողութիւնը «Եկեղեցական գրքերի օգտակարութեան մասին» Այս դատողութիւնը տեսականապէս պարզում էր, արն, ինչ որ գործնականապէս իր ամբողջ կեանքի ընթացքում արել էր Լոմոնոսովը, սկսած իր առաջին դրական փորձերից. — նա պարզում էր ռուս գրական լեզուի ստեղծելը, Եկեղեցական լեզուով գրած գրականութեան մէջ Լոմոնոսովը շատ Օւնհասկանալի տեղեր էր գտնում, որ առաջ էին եկել թարգմանութեան մէջ ալաւ լեզուին օտարութիւն լունական լատիւնութիւններ, մտքած լինելու պատճառով, Ժամանակակից ռուս գրականութեան մէջ նա նկատում է պլաւրենի և տարօրինակ բառեր, որ մտել են օտար լեզուներից։ «Ռուս մաքուր լեզուի» տեսութիւնը նա հիմնեց եկեղեցական-սլաւ լեզուի և ռամկական ռուսերէնի ձուլման վրայ, ընդունելով իբր պիտանի ռամկորէն բացառապէս Մոսկուայի բարբառը, իր «Դատողութեան» մէջ Լոմոնոսովը ընդհանրապէս ընդունում էր ռուս լեզուի և եկեղեցական-սլաւերէնի մերձաւորութիւնը և նրա կարծիքով ռուս բարբառներն իրար աւելի մօտ էին քան թէ գերմանական բարբառները և ալլն, իր ուսմունքը ոճերի մասին, Լոմոնոսովը հետեւեալ հիմքերի վրայ էր դնում. պէտք է տարբերել ռուս լեզուի բառերը՝ 1) բառեր, որ գործածական են թէ եկեղեցական-սլաւ և թէ ռուս լեզուում, 2) մատենագրական (հին) բառեր, բացի չափազանց մաշուածներն ու չգործածուողները և 3) ռամկական բառեր, բացի սղոցելի և ստոր» բառերը։ Մրանցից Լոմոնոսովը կազմում է իր երեք ոճը. «բարձր» ոճ, կազմած սլաւ-ռուսական բառերից՝ դիւցազներգական քերթուածներ, ձօներ և բարձր նիւթերի մասին արձակ ճառեր կաղմելու համար, «միջին» ոճ, ոչ վերաւայց և ոչ էլ ստոր» — եկեղեցական-սլաւ և ռուս բառերից կազմած՝ բարեկամական չափածոյ նպակներ, երգիծանքներ, էկլոգներ, եղերերդեր և նկարագրական արձակ կաղմելու համար, Եւ «ստորին» ոճ, կազմուած միջին ոճի և ռամկական «ստոր բառերի» միացումից՝ կատակերգութիւններ, էպիգրամներ, երգեր, արձակ բարեկամական նամակներ ու ստովորական գործեր գրելու համար։ Լոմոնոսովի ոճաբանական այս տեսութիւնն էր ահա, որ նրա գրական լեզուի համաձայնական դէնքի հետ միացած՝ ստեղծեց ԺԸ դարի ռուս գրական լեզուն — այսինքն բանաստեղծական, ճարտասանական և արձակ ոճը, թէ որքան լարգում էին բանաստեղծին նրա ժամանա-

կակիցներն ու հովանաւորներն, ինչպէս օրինակ Շուվալովը, երևում է սրա հեղինակած շարքերից, որ դրուած են Լոմոնոսովի պատկերի տակ 1757 թ. հրատարակութեան մէջ, Վոսկուպի Պաւլսման ալտեղ պատկերացնում է այն առաջնորդ դին, որ բանաստեղծական ու արձակ մաքուր ոճ բերեց Ռուսաստան, ինչ որ կիկերոնն ու Վիրգիլիոսն էին շնորհում, նա ինքը միայնակ ամփոփել է իր մէջ, բնութեան տաճարը նա բաց արաւ ուսանելի հարուստ լեզուով, նրանց (ուսանելի) գիտութիւնների մէջ ունեցած չնորհքի ապացոյցը— Լոմոնոսովն է։ Նոյն իսկ նրա թշնամի Սոմոբորովն ապագայում ասում էր նրա մասին «նա Մուլէրն է մեր երկրի, նա նման է Պիդարին»։

Այդ ժամանակները Լոմոնոսովը տեղափոխուեց ակադեմիայի պետական բնակարանից իր սեփական տունը, Մոսկուա 1759 թ. նա զբաղուած էր գիմնազ հիմնելով և նրա ու համալսարանի համար կանոնադրութիւն մշակելով, նա բոլոր ուժով պաշտպանում էր ստորին դասի կրթութեան իրաւունքը և հետեւալ առարկութիւններն անում այն մարդկանց, որոնք ասում էին թէ «ինչ կանենք ուսումնական մարդկիւն Լոմոնոսովի ասելով գիտուն մարդիկ հարկաւոր են» Վիրգիլի համար, լեւնային դործերի, դործարանների, ժողովրդին պահպանելու, ճարտարապետութեան, արդարադատութեան, բարքերն ուղղելու, վաճառականութեան, անարատ կրօնի միութեան, երկրագործութեան և եղանակը գուշակելու, ռազմական գործերի, հիւսիսային ճամբորդութիւնների և արևելքի հետ շփուելու համար։

Միաժամանակ Լոմոնոսովը պարապում էր նաև աշխարհագրական դեպարտամենտում, Ռուսաստանի մասին տեղեկութիւններ հաւաքելով 1760 թ. նա հրատարակեց «Համառօտ տարեգրութիւն ուսաց, աղղաբանութեամբ հանդերձ» իսկ երեք տարի լետով կազմեց «Հին պտտմութիւն ուսաց, սկզբից մինչև մեծ իշխան Սարոսլաւ I-ի մահը կամ մինչև 1054 թ.», որ լոյս տեսաւ հեղինակի մահից լետով 1768 թ.։ Չնայած որ Լոմոնոսովի պատմութիւնը միտումաւոր գրութիւն է և ճարտասանական ուղղութիւն ունի, բայց, ուսու հռչակաւոր պատմաբան Ս. Մ. Սոլովեովի կարծիքով, անտեղ նշանաւոր է հեղինակի օտար աղբիւրներից օգտուելը սլաւների ու Ռուսաստանի մասին գրելիս և այն մօտեցումը, որ նա թոյլ է տալիս հին հեթանոսական հաւատալիքների և ռամկական սովորութիւնների, պարերի ու երգերի միջև։

1760—61 թ. Լոմոնոսովը լոյս ընծայեց իր կիսատ մընացած «Պետրոս Մեծ» գիւցադներգութիւնը։ Չնայած որ ընդհանուր առմամբ այդ երկը մի թույլ գործ է, բայց նա նշանաւոր է հեղինակի հայրենի հիւսիսի նկարագրութիւնով, Սոմոբորովի առթից օգտուելը և մի չափածով գրուածքով ծաղրեց այդ գիւցադներգութիւնը։ Չուր էր աշխատում ի. Շուվալովը, մասամբ հանաքի տալով, մօտեցնել ու հաշտեցնել այդ երկու նշա-

նաւոր գրողներին, Լոմոնոսովը Շուվալովին մի երկար պատասխան-նամակ գրեց, որի մէջ, իր բարձր նշանակութեան ու արժանիքի սովորական գիտակցութեամբ, ասում է. «ոչ միայն անուանի պարոնները կամ սրեէ երկրաւոր իշխանի առաջ տխմար լինել չեմ ուզում, այլ և Աստծու առաջ, որ ինձ խելք է տուել»:

Իր գրած մի շարք թղթերում, օրինակ «Գիտութեանց տկաղեմիան բարելաւ դրութեան հասցնելու մասին» սա պաշտպանում է այն միտքը, որ «օտար գիտնականները սիրով չեն վերաբերում ռուս երիտասարդներին», նրանց ուսուցանելուն: Շարունակ խնդրամատոյց լինելը ընդհանուր ու անձնական գործերի համար, երբեմն շատ ծանր էր դալիս Լոմոնոսովին և ահա նա մի ոտանաւոր գրութեամբ նախանձում է ճպուռին «որ ոչ ոքից ոչինչ չի խնդրում ու ոչինչ էլ պարտք չէ ոչ ոքի»: Իսկ նամակներում դանդաղում է, որ շարունակ ստիպուած է շղուխ վեր բերել ծառայողներին»:

Իր նշանաւոր նամակներից մէկում, (1761) «Ռուս ժողովուրդը պահպանելու և բազմացնելու մասին», նա հանդէս է դալիս իբր մի նշանաւոր հրապարակագիր: Զուր չէր, որ նա մի քանի անգամ, թէև անաջող ջանք էր անում լրագիր կամ ամսագիր հրատարակելու իրաւունք ստանալ: Նա այդ նամակում ասում է, որ անհրաժեշտ է լաւ բժշկական օգնութիւն հասցնել ժողովրդին, որ պէտք է ոչնչացնել նրա սնահաւատութիւնը և մեղմել պատ պահելու չափազանց եռանդը: պէտք է տօնական չափից անցնող քէֆերի և անհաւասար ամուսնութիւնների առաջն առնել: Բացի այս Լոմոնոսովն ի նկատի ունէր շօշափելու հետեեալ հարցերը. «անգործութեան ոչնչացումը, բարձրն ուղղելը, ժողովուրդն աւելի ևս լուստաւորելը, երկրագործութեան կարգի բերելը, արհեստներն ու ճարտար արուեստները կարգի դնելն ու տարածելը, վաճառական դասի օգուտները, լաւագոյն պետական տնտեսութիւնը և ռազմական արուեստի պահպանութիւնը՝ երկարամեալ խաղաղութեան ժամանակ»: Նշանակելի է այն հանգամանքը, որ այդ նամակն ամբողջովին լուս տեսաւ միայն 1871 թ. իսկ մինչև այդ ժամանակը լուս էր տեսնում խոշոր պահպաներով»:

Կատարինէ Ս-ի գա՝ բարձրանալուց լետով Լոմոնոսովը գրեց մի ձօն, որի մէջ նոր կայսրունուն համեմատելով Նդիսարէի կայսրունու հետ, սպասում էր, որ Կատարինէ Ս-ը «Ոսկի դար կը բերի գիտութեանց համար, և արհամարհանքից կազատի սիրած ռուս ազգին»: Նոր ձօների մէջ Լոմոնոսովը գովկատով էր հանդիպում նոր կայսրունու խոշոր գործերի սկզբնաւորութիւնը Ռուսաստանի լուսաւորութեան ու դաստիարակութեան օգտին: Այս ձօները խառնում էին Գերթալինի ձօներին, որ նոր կայսրունու փառաբանիչը դարձաւ: Լոմոնոսովի գրութեանում մենք տեսնում ենք այս տեսակ խօսքեր կայսրունուն ուղղած. «Նա մեղմացնում է ժողովրդի կոպտութիւնը և բոլորին երանութեան մօտեցնում նորոգած իրաւունքների միջոցով»:

Լոմոնոսովի «Սիբիրի ուկրաինոսով Արեւելեան-Հնդկաստան գնալու մասին» գրուածքի աղղեցութեան տակ 1764 թ. կաղմակերպուեց մի գիտական ճամբորդութիւն Սիբիրի հիւսիսային ասիերով, Նոյն ժամանակները Լոմոնոսովը ազագրեց մետաղագործութեան տարերքը և սկսեց հանքաբանութեան մասին մի աշխատութիւն պատրաստել:

Կեանքի վերջին նա ընտրուեց Ստոգոլմի և Բոլոնի ակադեմիաների անդամ, 1764 թ. Կատարինէ Ս կայսրուհին այցելեց Լոմոնոսովին իր տանը և երկու ժամ նալում էր նրա «մոզալիկ ճարտար արուեստի աշխատանքներին», նրա նորգտած բնագիտական գործիքներին ու արած մի քանի բնագիտական ու քիմիական փորձերին: Հեռանալիս Լոմոնոսովը կայսրուհուն ոտանաւոր շնորհակալութիւն մատուց: Մինչև կեանքի վերջը նա չէր դադարում իր ծնող ազգականներին օգնելուց, կանչում էր նրանց Պետերբուրգ և նամակագրութիւն էր պահպանում նրանց հետ: Պահպանուել է նրա քրոջը գրած նամակը մահից մի ամիս առաջ. նա մեռաւ 1765 թ. ապրիլի 4-ին: Լոմոնոսովի թաղումը Ալեքսանդր Նևսկու լաւարում փորթում էր և բաղմամարդ: Նրա թղթերը, կարգի բերելուց լետոյ, պահում էին պալատի սենեակներից մէկում: Նրա մարմարէ մահարձանը, որ մինչև այսօր էլ կալ, դրել է կանցլեր Դր. Որոնցովը: Լոմոնոսովը իրանից լետոյ մի աղջիկ թողեց. նրանց ցեղը մինչև այսօր էլ կալ, 1825 թ. նրան արձան կանգնեցին Արխանգելսկ քաղաքում, իսկ նրա կիսարձանները գրուած են Մոսկուայի համալսարանի և Պետերբուրգում ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան շէնքի առաջ: Լոմոնոսովի նշանակութիւնը ժԸ դարի ուսու գրական նութեան մէջ արտալայտուել է ոչ առանձին աչքի ընկնող հեղինակութիւնների և ոչ էլ նրանց ներքին բովանդակութեան մէջ, այլ նրա գործունէութեան ընդհանուր բնաւորութիւնով ու ուղղութեամբ: Լոմոնոսովը ուսու գրական լեզուի վերափոխիչն էր: Նրան Պետրոս Սեծի հետ համեմատելը, որ առաջին անգամ 1816 թ. անում է Բատիւշկով բանաստեղծը՝ իսկ լետոյ աւելի ընդարձակեց Բէլինսկին—լիովին հիմնաւոր է, քանի որ, Պետրոս Սեծի քաղաքական ալքութն ստեղծելը, որ աշխարհիկ զրականութիւնը բաժանեց եկեղեցականից, Լոմոնոսովի զրական լեզու ստեղծելն է լիեցնում, որ նոր լեզուն բաժանեց հիկեղեցական-սլաւերէնից: Լոմոնոսովի գուտ գրական երկերը միայն պատմական նշանակութիւն ունին. նրանց մէջ ոչ մի աչքի ընկնող, ամբողջական բան չկալ, բացի ձօները, որոնց մէջ ցոլանում է Նդիսարէթ կայսրուհու ժամանակը: Ռուս գրական լեզուի նորոգիչը չկարողացաւ նորոգիչ լինել նաև գրականութեան մէջ, նա մինչև վերջն էլ ամեն տեղ մնաց կեղծ-դասական դպրոցի հետևող: